

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարւանը
6 րուբլի
Առանձին համարները ԱՄՆ \$ 40%
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը
Մեր հասցեն՝ Тифлисъ, редакция „Мшакъ“
Сергиевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և սոսի օրերէն)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուդ
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողաւորին 20 կոպէկի
Տպարանի տէլեֆոն № 67.

ՄՇԱԿ

(39-րդ ՏԱՐԻ)
Հասցեն՝ ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSHAK“.
Յայտարարութիւնները համար գինը վճարելու համար
տեղին (պետք) — 20 կոպէկ, IV երեսի վրա — 10 կոպէկ
Կովկասի գործարարական և արհեստագործական
կոնտրոլի Կոմիտէի Կենտրոնական Կոնտրոլի Կոմիտէի
Ա. և Գ. Մետալի և Կ. Օ. Մետալի, և նախ քան թանկութիւնները
գումար՝ Морская, 11, Կարմիր խաչի մոտ, 130, Պարիզում՝ 8 Սոլոմոն
ԱՊՐԱՆԻ ԲԱՆԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ 21 ԵՆԴՈՒՆՎԱՆՈՒ

„ՄՇԱԿ“ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Խնդրվում է այն բաժանորդներին, որոնք վճարել են
տարեկան բաժանորդական կես մասը, շտապել ու-
ղարկել երկրորդ մասնավճար 5 րուբլին, որպէսզի
քերքի առարկան գործում ընդհատում տեղի չունենայ:

Տ. ՓԻՆՈՅԵԱՆԻ

ԱՌԵՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՕՏԱՐ ԼԵ- ՋՈՒՆԵՐԻ ԴԵՐՆԵԹԱՅԻՆԵՐԸ

Կայանում են, որ պարսկացիների 172 ունեւորներին և անկողններին ներկայ տարին առաւել
են հաշտարարական բաժանումները 121 հոգի Անտար. ֆրանսիական զորքերի խմբակները կա-
րող են հաշտարարներ և այլ առար. ծառայողներ այն տնային, որոնք ջոյ են տուել զերգաւ ընդ-
նակութիւն Գիտ. Թիֆլիս, Տ. Մ. Փիլոսոֆի:

„ՆՈՐ ԱՎՈՒՄԻ“ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Այս ամսի 21-ին, 1911 թ.
Օրվա ծրագիրը կը յայտարարվի առանձին Միջին այդ ամսուր յունիսի 21-ից բաց
կը լինի անգլիական և հիւրերի համար Հիւրերը մուտքը համար վճարում են՝ տղամարդիկ
50-ական կոպէկ, իսկ կանայք և ուսանողները 25-ական կոպէկ:
ՏՐԱՌԻՍ ԵՆ ՍԷՋՈՆԻ ՏՈՍՍԱԿՆԵՐ:

Զգրաչեիս Ա. Աւետեաց եկ-ծիական երկստոյ դպրոցում

առաջիկայ 1911—12 ուսումնական տարւանից ԲԱՑԻՆՈՒ և ՀԻՆԳԵՐՈՐԻ ԲԱՑԻՆ-
ՍՈՒՆԻ: Ինչպէս այս, այնպէս և միւս բաժանումները համար նոր աշակերտ-աշակեր-
տներին խնդրենք ծաղիկ պատուատման և ծննդեան վկայականները հետ մինչև
ամսի 30-ը ընդունվում են դպրոցում ամսի օր առաւօտեան Կոմ 10—12-րդ
Առաջին երկրորդ և երրորդ բաժանումները համար տարեկան ուսման վճար նշանակ-
ված է 10 ր., իսկ չորրորդ և հինգերորդ բաժանումները համար՝ 15 ր.:
2—1 670. (Կ. Ս.) Հոգաբարձութիւն

ФАБРИКИ
АЭНФИДЖИАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦЕНА
25 шт. 15 к.
10 ш. 6 к. 100 ш. 60 к.

ПАПИРОСЫ
ЛЕВЪ
20 шт.
5 коп.

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт.
6 коп.

ФАБРИКИ
АЭНФИДЖИАНЦА

ՊԱՍՏԱՐՆԵՐ

(ՕՅՈՒ)
ԵՂԲ. ՏԵՐԵՇՊՈԼ
ՖԱՐԻԿԱՍԻ
Բաժանումները Թիֆլիսում, Գոր. պր. 21,
տուն Երեւանի, Եկ., տէլեֆոն № 355.
Պատկերում միջոց կան մեծ բանակարանար
ընթաց պատուումը ամսականները միայն
ՖԱՐԻԿԱՍԻ ԻՍԿԱԿԱՆ ԳՆԵՐՈՒԹ
8 կոպ. պատկերում 6 ր. իւրաքանչիւր րուբլու
մէջ պատկերները Թատուտանը վկայար. քաղաք-
ներում:

ՆԱՌԵՆԵՐԸ ՈՒՐԱԿՎԱՆՈՒՆ ԵՆ ՏԱՐԻ:

(Կ. Ս.) առ. 207. 50—29
ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ
Երեկ, յունիսի 20-ին, առաւօտեան
Ժամը 9 1/2-ին, Թիֆլիսում, Վե-
րաժիշտական փողոցում, յանկար-
ծաման եղաւ ծերունազարդ հայկա-
կան գրական և մանկավարժական աշ-
խարհի մտիկաներից մէկը՝ Ղազարոս
Աղայանը, որի գրական-մանկավար-
ժական և ազգային-հասարակական գոր-
ծունէութեան 50-ամեակը լրանալու
էր առաջիկայ 1912 թ.ին:
Ղազարոս Աղայանը գերեզման է
լինում 72 տարեկան պատկառելի հա-
սակում:

Իր գերեզմանը հայկական գրականութեան
և մանկավարժութեան մէջ նա արդարեւ
կատարել աւարտել էր, բայց այնու-
ամենայն նրա մահը ծանր կորուստ
պէտք է համարվի հայկական գրական
աշխարհի համար, որ առանց այն էլ
աղքատ է ոյժերով և տաղանդներով:
Իսկ Ղազարոս Աղայանը ընծին,
ընտուր քանքար էր, զուրս եկած՝
հայկական բերտ, բայց անսխալ իրա-
կանութիւնից, բուն ժողովրդի միջից,
իրեն զաւակ այդ ժողովրդի, ապրած
նրա մէջ, ծանօթ նրա ցաւերին, կա-
րէքներին, խոհերին:

Նա գեղարուեստական գրող, վիպա-
սան չէր, բայց հայկական գրական ա-
շուղ էր և մանաւանդ մանկական ան-
գանատները գրող էր ինքնուրոյն, ինք-
նատու լեզուով, ոճով և գաղափար-
ներով:
Նրա կեանքը հետաքրքրական է,
և նա ինքը գրել է իր ինքնա-
կենսագրութիւնը, որից ապագայ հայ
պատմաբանը, անշուշտ, շատ ճոխ նկիւ-
կը քաղէ թէ նրա գործունէութեան գնա-
հատութեան և թէ նրա ժամանակի
ընդունման համար:

Իրեն «Յարութիւն և Մանուէլ» և
«Երկու քոյր» վեպերի հեղինակ, ու-
րեմն իրեն վիպասան, նա չէ կարող
տեսական և առաջնակարգ անդ գրաւել
հայ գրականութեան մէջ և նոյն իսկ
գրեթէ մոռացված է, բայց իրեն հե-
ղինակ մանկական ընթերցանութեան
երկերի, իրեն հեղինակ «Տոբե ան-
գեղ» գեղեցիկ գիւղացիներական պոե-
մայի, իրեն հեղինակ «Անաճիւր»,
«Արեգան» մանկական գրութեանը
նա երկար և երկար կարէ հայ գրա-
կանութեան մէջ:
Մեծ է և նրա մատուցած ծառայու-
թիւնը մանկավարժական գործին իր
հայոց լեզուի դասագրքերով: Յայտնի
է և նրա մտքում լինող ուղղադրու-
թիւնը հայոց լեզուի մէջ:
Ղազարոս Աղայանը գործեց հայ
ժողովրդի համար ինչքան կարո-
ղացաւ, երկար և ձիգ աշխատեց. նա
մեծ ազգային քաղաքակրթութեան և
գրագիտական ընթերցանող դասնակի-
մէջ իր առանձին լուսման. նա կա-
տարեց իր պարտքը և այսօր նա ար-
ժանի է, որ մենք անենք:

«Ներքին խաղաղութեամբ, երկարա-
մեայ և բազմաշաւտ գործիչ: Գո-
լիշատակը կը յարգենք եղբւր յիշեն մեր
մատող սերունդները:

Դ. Ղազարոս Աղայանը ծնվել է 1840
թ. Ղազար-Սեդրակի ընտանիքում (Կ. Ս.)
Նրա առաջին գրական աշխատու-
թիւնը լույս է տեսել «Մեղու Հայաս-
տանի» մէջ: Նա եղել է ուսուցիչ,
տեսուչ հայոց դպրոցներում, թեմա-
կան տեսուչ Թիֆլիսի թեմում, աշ-
խատակցել է «Մշակ», «Աղբիւր»,
«Մեղու Հայաստանի», «Տարազ»,
«Մուրմուրակ» և «Հորիզոն» թերթե-
րին:
1902 թ. տունվեց Թիֆլիսում նրա
գրական գործունէութեան 40-ամեայ
յօրեկանը:
Յայտնի է, թողել է անտիպ
գրութեանը թէ ոչ:

ՎԵՐԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 յունիսի
Սովետ. — Ժամանակը կը լինի:
Բերլին. — «Berliner Tageb. Zeit.»-ին
հեռագրում են Պետերբուրգից, թէ իւր
Պ. Ստոլիպինը թողնում է պաշ-
տօնը և նրա տեղը կը լինի Ի. Գորե-
միլինը:

Կիւովորյով. — Յունիսի 18-ին Լաւն-
տուկի եկաւ հաղորդակցութեան մի-
նիստը և երեկոյան Կիւովորյով այցե-
լեց:

Օդեսա. — Ուղղիչ ապաստարանից
փախաւ 7 ամեակ. երեսն հանվեց խո-
լերայով մեղմելու մի դէպք:

Թարիզ. — Նէշէֆի մուշտիկները
առաջարկում են պարսիկներին մէջի-
սի պատգամաւորներ ընտրել ուս-
միականներին (?) և ոչ պահպանողա-
կաններին:

Բերլին. — Շահադատված գերմանա-
կան ֆերմաների խնդրանքի համաձայն՝
կառավարութիւնը Ագադի ուղարկեց
գերմանահասարակական պաշտպանու-
թեան համար «Պատեր» յաժմանաւ,
յայտնելով միաժամանակ Մարոկոյի
կառավարութեանը, որ նախ առաջու-
մը կապված չէ որեւէ թշնամական
մտադրութիւնների հետ Մարոկոյի
նկատմամբ:

Պարիզ. — «Տանը» կարծում է, որ
Գերմանիայի քայլը Մարոկոյի նկատ-
մամբ բանակցութիւնների առիթ կը տայ:
Դեռեւից հարկադրված կը լինի միջոց-
ների ձեռնարկել գաղնակցների հետ:

19 յունիսի
Պարիզ. — Մարգրիդից հաղորդում են,
որ ֆրանսիական կառավարութիւնը
հարցրեց Սպանիայից սպանական
զորքերի շարժման վերաբերմամբ տա-
րածված լուրերի մասին, որոնք վերա-
բերում են Սպանիայի մտադրու-
թեան՝ Ուլզգանի վրա արշաւելու մա-
սին: Սպանիան պատասխանեց, որ ոչ-
չինչ չը գիտէ այդ լուրերի մասին և
այդ արշաւանքը չէ մտնում Սպա-
նիայի մտադրութիւնների մէջ:

Սոֆիզով. — Գործադուլարանների հետ
ունեցած անաշուղ բանակցութիւնների
հետեանքով շինարարական գործի գոր-
ծառքերի կենտրոնական միութիւնը
յունիսի 27-ից (ն. տ.) լոկաւոր յայ-
տարարեց:

Հոմ. — Մերթաւի նահանգում առաջ
եկան գիւղացիական խիստ յուզում-
ներ, գեղավարութեամբ յեղափոխական
օրհանգիստներին: Սպասվում է ընդ-
հանուր գործադուլ: Դեպքի վայրն ու-
ղարկեցին մեծաքանակ զորքեր և ոստի-
կանութիւն:

Հոմ. — Ժամանակը թիւրաց դատ-
ժողանքը, որին կայարանում դի-
մաւորեց թագաւորը:

Կիւսաբով. — Յուզիչ լուրերի ազդե-
ցութեան ներքոյ, որոնք ստացվում են
Օպորոյից, կառավարութիւնը սպառա-
զնում է պահեստի հեծելազորքը,
բաղկացած մօտ 2000 մարդուց:

Պարիզ. — Պամը պալատ մտցրեց մի
օրինակ, որով պետք վերացվեն դի-
նեզործների շրջանների սահմանափա-
կումները:

Պատգամաւորների պալատում մի
շաբթ պատգամաւորներ պահանջում
են միջխորտական ծրագրի աւելի ճշգ-
րեցում: Երբեք զորքերը հրատա-
րատարութեան և ժողովրդական դեպ-
ութիւնների հարցերի նկատմամբ: Կայսրի
բացատրութիւնները յետոյ պալատը
367 ձայների մեծամասնութեամբ ընդ-
դէմ 173 ձայների ընդունեց հերթա-
կան հարցերին անցնելու բանաձեւը, յայտ-
նելով կառավարութեանը յատուցութիւն
իր մտադրութիւնների վերաբերմամբ,
որոնցով նա իր կատար պետի ամէ
հանրապետական ծրագրերը, աշխարհիկ
և սոցիալական բարենորոգումները,
միացնէ հանրապետականներին ընտ-
րական բարենորոգման հարցի առիթով,
արագ կերպով անցկացնելով բարենո-
րոգումը:

Հազար. — 3000 մարդու ներկայու-
թեամբ կայացաւ ընդդիմադիրների մի-
տինգը: Հետորեն բողոքեցին գիւ-
ղական թեմից Բէկի բաժանման դէմ:

Պէլին. — Չինական իշխանութիւննե-
րին կենտրոնական կառավարութիւնը
առաջարկեց պարզել Սոնգոյի խառն
աղբոյ և առևտուրով պարսպադրու-
ման թիւը, որոնց կառավարվի հեռա-
նալ այն բոլոր տեղերից, որոնք բաց
չեն օտարազգիների առևտրի համար:

Պետերբուրգ. — Արեւելահայտութեան
ընկերութիւնը գործնական զարմուռե-
րին համար Չինաստան, Եսպանիա,
Պարսկաստան և Թիւրքիա է ուղար-
կում արեւելեան ճեմարանի 9 ունի-
զիւններ:

Բերլին. — «Ելէյէ» Գործիչ-Դրամ-
գետներաբանից հաղորդում են յու-
նիսի 18-ից Բատալիայից, որ Տիմոտ
կղզու վիճակի սահմանագծի վրա հոյ-
կանական և պորտուգալական զորքե-
րի միջև ընդհարում առաջացաւ: Պոր-
տուգալացիները գրաւեցին հոյկանա-
կան հողաբաժինը իսկ հոյկանացի-
ները առաջ քաշեցին իրանց զորամա-
սը բաղկացած 400 մարդուց և դէպքի
վայրը ուղարկեցին իրեն երկու վաշտ:
Հոմ. — Պալատի անդամներին բա-
ժանվեց կանաչ գլուխ Մարոկոյի մա-
սին:

Վիեննա. — Լրագիրները հաղորդում
են «Թալիս» վիեննայի թղթակցի
գրածների մասին, յայտնելով, որ տե-
ղական սահմանադրանքի մէկում բժշ-
կական

վող գեներալ-ադիւտանտ Պաօլիչը,
նիկոլայ արքայի թիկնապետը, խկա-
պէս զաւորի նպատակ ունի վիեն-
նայում: «Ելէյէ-Պրէսէ»-ի «Ելէյէ» իմա-
ցել է հաւատարմ աղբիւրից, որ բաղա-
նան գործերի առիթով համազումարի
հրաւիրումը վերացված է, միայն եթէ
մինչև յունիսի 16-ը խաղաղութիւնը
չը վերականգնի, այն ժամանակ հա-
րաւոր է դառնում այլապէս հարցի
միջազգայնացումը:

Հելսինգֆորս. — «Տուօյի» թերթի
պատասխանատու խմբագիրը դատա-
պարտվեց 6-ամեայ բանտարկութեան,
1908 թ.ին իր թերթում պետական
զինանշանը աղաւաղած ձևով նկարե-
լու համար:

Մոսկւն. — Մինիստրական խորհուրդը
իր համաձայնութիւնը տուեց Մանու-
րիայի գեներալ-նահանգապետի առա-
ջարկութեանը, տեղափոխելու նրա
նստատեղի Մոսկւնից Կուսկէն:

Բէլգրադ. — Ֆինանսների և երկրա-
գործութեան մինիստրների միջև ծա-
ռած անհամաձայնութիւնների պատ-
ճառով միացեալ կարէնէտը հրաժարա-
կան ներկայացրեց:

Բէլգրադ. — Կարէնէտի կազմումը
կը յանձնարարվի սկուպչինայի նա-
խագահ Անդրո Նիկոլային:

(Լրագիրներից)
Տըրքով. — Օսթրալիաների միտին-
գը, որը պետի կայանար բողոքելու
ազգային մեծ ժողովը թագաւորի կող-
մից բացելու դէմ, ոտով կանոնեան
կողմից յարուցված արգելքի պատճա-
ռով տեղի չունեցաւ: Սակայն միւս
քաղաքներում նման միտինգներ կապ-
ցան. այդպիսի մի մեծ միտինգ տեղի
ունեցան նաև Սօֆիայում, որի
նախաձեռնողները ենթարկվում են
թեմի թագաւորը հասցրած լրա-
դարձումները գործածելու համար:

Տըրքով. — Կանանց միութեան երեկ-
վայ միտինգը շատ բազմամարդ էր և
անցաւ շատ աշուղ:

Պարիզ. — Նախագահ Ֆալիէրը հա-
տառեց Կայսրի մինիստրական կարէն-
տի կազմը:

ԹԻՐԻԲԱ ԵՒ ԲԱԿԱՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
18 յունիսի

Կ. Պոլս. — Սուլթանը երկրպագեց
մարգարէի վերադարձին հին Սէրայի
մզկիթում: Բ. Դուրը Մաքսիմ Ենէյ-
դէրի գինադորմարաններին պատուիրեց
100 գնդակացի, 36 լեւաւայի և 3
դաշտային թուրաններ:

Կ. Պոլս. — Օսմանեան գործակալու-
թիւնը հաղորդում է, որ գինադական
մինիստր Մանուէլ-Տէֆէթի փաշան
հերքում է թիւրք զորքերի նկատմամբ
տարածված այն լուրերը, որոնցով
թիւրքական զորքերին վերաբրվում են
խառնութիւններ՝ այլապէս իրեն նկատ-
մամբ գործադրված, հաւատարմութիւն
որ ապստամբ վաշտի կապից: Չէր-
հօօրիա էին փախել, հետևաբար և չէին
կարող զոհ դառնալ: Երկու եկեղեցի-
ները քանդուում և հաղորդելու աւելի տնե-
րի մի մասի կործանումը կատարված
է այլապէս ձեռքով: Մինիստր լրա-
գիրներից խնդրել է իր խօսքերի
ճշգրտման համար թղթակցները ուղարկել
Տուրքով փաշայի բանակը:

(Լրագիրներից)
Յետին. — Տեղեկութիւն ստացվեց,
որ թիւրք կառավարութիւնը այլապա-
ցիներին կրկին 15 օր ժամանակա-
շրջ տուեց գինադական լինելու և հպա-
տակութիւն յայտնելու համար:

Յետին. — Յունիսի 14-ին այլապա-
ցիները ամբողջ գծի ուղղութեամբ սկսե-
ցին յարձակումներ գործել: Նրանք
յանկարծախիլ են բերում թիւրք զոր-
քերին:

Լոնդոն. — Թիւրքական դեսպանու-
թիւնը բողոք յայտարարեց՝ թիւրքու-
կան զորքերի Ալբանիայում կատարած
խառնութիւնների մասին պարտված
լուրերի դէմ:

[illegible]

